

հոն բնակեցաւ մինչև 1144, Բեթանիոյ նոր վանքը երթալէ յառաջ: Յովհաննէս Վըրդպուրկցի 1150ին Ս. Աննայի միաբանութիւնը գտաւ աւելի բազմութիւն և բարգաւաճ:

Սալահէտտին 1187ին Երուսաղէմը զբաւելէ յետոյ, Յովակիմ-Աննայի եկեղեցին մէտրէսէի վերածեց, Ապուլֆէտա պատմագիրը (* 1331) այս մասին կուտայ հետեւեալ տեղեկութիւնը. «Սուլթանը (Սալահէտտին) 1192ին հրամայեց շինել պարիսպները եւ աւելցուց եկամուտները այն վարժարանին զոր հիմնած էր այս քաղաքին մէջ:— Իսլամութենէ յառաջ, այս շէնքը ծանօթ էր Հաննա Իւմմ Մէրիէմ (Աննա՝ մայր Մարիամու) անուամբ. իսլամ տիրապետութեան տակ, այս եկեղեցին կը ծառայէր իբր Տուն գիտութեան-Ֆոանկները երբ հիճրէթի 492ին Երուսաղէմի տիրացան՝ վերածեցին զայն իր առաջին նպատակին. — վերջապէս սուլթանը երբ Երուսաղէմի տիրեց, դարձեալ զայն վարժարանի վերածեց և Պէհա-էտ-տին-իպն-Շէտտատ գատաւորին յանձնեց վարժարանի տեսչութիւնը և հաստատութեան ստացուածոց վարչութիւնը»: Մի ուրիշ արար պատմագիր Միւճիր-էտ-տին 1520ին Երուսաղէմի և Քերրոնի իր պատմութեան մէջ կը գրէ. «Սալահէտտին՝ իր շուրջը գանուող իւլէմաներու հետ խորհրդակցելով Ս. Աննա կոչուած եկեղեցին, որ կ'ըսեն թէ Մարիամի մօր՝ Ս. Աննայի գերեզմանը կը պարունակէ, և կը գտնուի Պապ էլ-Սէպաթի մօտ, Shafeites գիտուններուն յատուկ վարժարանի մը վերածեց. (նոյն դպրոցը իսլամութեան կրօնա-իրաւագլխական չորս դպրոցներէն մին էր): Միւսնոյն հեղինակը կ'ըսէ դարձեալ. «Սալահէտտինէ հիմնուած մէտրէսէն, Յունաց ժամանակ եկեղեցի մ'էր, եւ կը կոչուէր գերեզման Աննայի, վասն զի, ըստ աւանդութեան, ան կը պարունակէ Մարիամի մօր՝ Աննայի գերեզմանը, Սալահէտտին հիմնած է զայն 1192ին: Այս դպրոցի շէյխին պաշտօնը իսլամ կայսրութեան մէջ կարեւոր պաշտօններէն մին է»:

Զանց կ'ընենք յիշատակել Ricoldi (1292), François Pipino (1330), իտալացի Անանուն (1384), Guillaume Baldenzel (1330), անգղիացի Jean Mandevill (1330), Ludolphe (1336), Դոմինիկեան Fabri (1479 և 1483), իշխան Radzivil (1583), ուխտաւորները որ այցելած են Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցին, և անոնցմէ չատեր կը յիշատակեն թէ Ս. Կոյսը նոյն տեղը ծնած է և հոն կը գտնուի